

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Վարչական բողոքը մասնակի բավարարելու, Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2016թ. թիվ 1605036596 որոշումը բեկանելու, իսկ 08.09.2016թ. թիվ 1605036595 որոշումն անփոփոխ թողնելու մասին

<<09>> 10 2016թ. 77-4-21303

ք.երևան

«Ն ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետի պաշտոնակատար, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Հարություն Գևորգյանի դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շերամ փողոցի 23 շենքի 28 բնակարանի բնակիչ Հարություն Գևորգյանը դիմումով խնդրել է անվավեր ճանաչել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2016թ. թիվ 1605036596 որոշումը՝ նշելով, որ այդ իրավախախտումը և 08.09.2016թ. թիվ 1605036595 որոշմամբ ամրագրված իրավախախտումը արձանագրվել են նույն օրը, նույն ժամին, որն անհավանական է:

Խնդրել է ետ վերադարձնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին որոշումով վճարված գումարը՝ կից ներկայացնելով վճարման անդորագրերի, անձնագրի և վարորդական վկայականի լուսապատճենները:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2016թ. թիվ 1605036596 որոշումը ենթակա է բեկանման, իսկ 08.09.2016թ. թիվ 1605036595 որոշումը չի կարող հիմք հանդիսանալ վերանայման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Ս/թ օգոստոսի 21-ին՝ ժամը 10:55:54-ին դիմումատուի վարած Mercedes-Benz մակնիշի 35CP374 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը Պոլոնք գյուղի վարչական տարածքում գերազանցել է երթևեկության սահմանված արագությունը, որը արձանագրել է (Ptghunk) արագաչափ սարքը, սակայն նույն օրը՝ ժամը 10:56:06-ին նույն տրանսպորտային միջոցի նմանատիպ խախտում արձանագրել է Փարաքար գյուղի վարչական տարածքում տեղադրված (ParakarY) արագաչափ սարքը, որը վրիպակի արդյունք է, քանի որ այդ երկու արագաչափերի միջև ընկած տարածությունը անցնել միևնույն ժամին՝ 12 վայրկյան տարբերությամբ անհավանական է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն «Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա»:

Ելնելով վերոգրյալից, նկատի ունենալով իրավախախտումների կատարման ժամանակահատվածի ապացուցման անհնարինությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2016թ. թիվ 1605036596 որոշումը բեկանել, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարճել և վճարված գումարը ետ վերադարձնել:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2016թ. թիվ 1605036595 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով առանց բավարարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Հարություն Գևորգյանին, ՃՈ ֆինանսական բաժանմունք և ՏՄՀԽԱ կենտրոն:



Ե. Կարապետյան